ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ի դեմս՝ Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ մշակույթի նախարարության լիազորված ներկայացուցիչներ՝ Ա. Սողոմոնյանի և Ռ. Ստեփանյանի (լիազորագիր՝ տրված 21.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/441-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 10.01.2019թ. թիվ 02/01.91/60-19 գրության հիման վրա, 16.01.2019թ. թիվ 26-3/441-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝

խնդրելով նախաձեռնել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/12 ընթացակարգի շրջանակներում 22.01.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ մշակույթի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ մշակույթի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.01.2019թ. թիվ 02/01.91/60-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով 26.04.2018թ. հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ գնորդ) և «ՄԱԴԷԼ» ՍՊ ընկերության միջև (այսուհետ՝ վաճառող) 2018 թվականի հունիսի 22-ին ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով կնքվել էր պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), որի շրջանակներում վաճառողի կողմից պետք է մատակարարվեին պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված ապրանքը՝ 4 հատ սանթուր /վարպետի աշխատանք/:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված էր 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:

2018 թվականի դեկտեմբերի 12–ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով վաճառողի կողմից ներկայացվել է պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև 2018 թվականի դեկտեմբերի 12-ին դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը:

Սակայն 2018 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ վաճառողի կողմից չի տրամադրվել ստորագրված՝ ապրանքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես նաև պայմանագրով նախատեսված ապրանքը:

Պայմանագրի 2.4.3-րդ կետի համաձայն՝ վաճառողը պարտավոր էր գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք, սակայն 2018 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատարին ուղղված քաղաքացի Սերգեյ Սադոևի գրությամբ տեղեկացվել է, որ իր պատրաստած 4 սանթուրի համար «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն չի վճարել, և ինքը չի վստահում ընկերությանը ու չի հանձնում գործիքները:

ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 24-ին պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.4-րդ և 2.1.7-րդ կետերի, ինչպես նաև 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի պահաջները:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով պայմանագրի 7.9-րդ կետը՝ կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2018 թվականի դեկտեմբերի 27-ին հրապարակվել է տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/12 ընթացակարգի շրջանակներում 22.01.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2019/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ մշակույթի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 22.06.2018թ. կնքվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո մինչև 01.12.2018թ. ՀՀ մշակույթի նախարարությանը մատակարարել 4 հատ սանթուր:

2. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 27.12.2018թ. թիվ 02/01.91/9334-18 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնել է, որ ՀՀ մշակույթի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 22.06.2018թ. կնքված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից պետք է մատակարարվեին պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված ապրանքը՝ 4 հատ սանթուր /վարպետի աշխատանք/:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված էր 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:

2018 թվականի դեկտեմբերի 12–ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև 2018 թվականի դեկտեմբերի 12-ին դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը:

Սակայն 2018 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից չի տրամադրվել ստորագրված՝ ապրանքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես նաև պայմանագրով նախատեսված ապրանքը:

Ընդ որում՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատարին ուղղված քաղաքացի Սերգեյ Սադոևի գրությամբ տեղեկացվել է, որ իր կողմից պատրաստված 4 սանթուրների համար «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն չի վճարել, և ինքը չի վստահում ընկերությանը ու չի հանձնում գործիքները:

Պայմանագրի 2.4.3-րդ կետի համաձայն՝ վաճառողը պարտավոր էր գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.4-րդ և 2.1.7-րդ կետերի, ինչպես նաև 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 24-ին պայմանագիրը միակողմանի լուծել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/441-19 գրությունը, ՀՀ մշակույթի նախարարության 10.01.2019թ. թիվ 02/01.91/60-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ մշակույթի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 22.06.2018թ. կնքվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագիրը ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից հաշվառվելուց հետո մինչև 01.12.2018թ. ՀՀ մշակույթի նախարարությանը մատակարարել 4 հատ սանթուր:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 27.12.2018թ. թիվ 02/01.91/9334-18 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնել է, որ ՀՀ մշակույթի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 22.06.2018թ. կնքված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից պետք է մատակարարվեին պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված ապրանքը՝ 4 հատ սանթուր /վարպետի աշխատանք/:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված էր 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:

2018 թվականի դեկտեմբերի 12–ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև 2018 թվականի դեկտեմբերի 12-ին դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը:

Սակայն 2018 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից չի տրամադրվել ստորագրված՝ ապրանքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես նաև պայմանագրով նախատեսված ապրանքը:

Ընդ որում՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատարին ուղղված քաղաքացի Սերգեյ Սադոևի գրությամբ տեղեկացվել է, որ իր կողմից պատրաստված 4 սանթուրների համար «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն չի վճարել, և ինքը չի վստահում ընկերությանը ու չի հանձնում գործիքները:

Պայմանագրի 2.4.3-րդ կետի համաձայն՝ վաճառողը պարտավոր էր գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.4-րդ և 2.1.7-րդ կետերի, ինչպես նաև 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 24-ին պայմանագիրը միակողմանի լուծել է:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետով և նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն ՀՀ մշակույթի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 22.06.2018թ. կնքված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի շրջանակներում չի իրականացրել Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ 4 հատ սանթուր, մատակարարելու իր պարտականությունն, էականորեն խախտելով Պայմանագիրը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/441-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00907267) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ